

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 27/12

Քաղ. Երևան

27 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. նոյեմբերի 27-ի նիստում (արձանագրություն N 8.8) քննարկեց «Սեյվերգլասս» ընկերության կողմից 2012թ. հոկտեմբերի 3-ին ներկայացված ծավալային ապրանքային նշանի (հայտի համարը 20111618) գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու մասին» կարգի 107-րդ կետի 11-րդ մասը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը վերարտադրում կամ ներառում է ՀՀ-ում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական նմուշը: Տվյալ դեպքում հայտարկված ծավալային ապրանքային նշանը (շիշ) չի կարող գրանցվել, քանի որ այն վերարտադրում է ՀՀ-ում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական նմուշը («Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ, Երևան, Բագրատունյաց փ., շ. 38, 28.02.2011, N259):

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և խնդրում է վերանայել այն՝ հիմք ընդունելով բողոքում բերված փաստարկները:

Բողոքարկողը պնդում է, որ ծավալային նշանները նման չեն և ունեն տարբեր գրաֆիկական լուծումներ: Դիտարկվող ծավալային նշանների գրաֆիկական (տեսողական) տարբերությունը որոշվում է դրանց ընդհանուր ընկալման սկզբունքով, ստեղծագործական ոճային իրականացմամբ: Վիճարկվող ծավալային նշանը և հակադրված արդյունաբերական նմուշն իրենցից ներկայացնում են գինու

ապակյա շէր, որոնք չնայած և նման Բորդոլեզ ոճով են իրականացված, սակայն ունեն տարբեր արտաքին տեսք շնորհիվ դրանց առանձին կառուցվածքային տարրերի տարբերության:

Բողոքում նշված է, որ չնայած շէրի ոճերի որոշակի նմանության, դրանց առանձին տարրերը, այն է՝ վզիկները, ուսերը, իրանները և հատակները, բավական տարբեր են, այսինքն հայտարկվող և հակադրվող շէրը տարբերվում են ծավալային նշանը կազմող յուրաքանչյուր տարրով ինչի շնորհիվ էլ դրանք ունեն տարբեր արտաքին տեսք և հետևապես տարբեր ընկալում: Շնորհիվ ուսերի և վզիկներին միացման հատվածների տարբերությանը՝ շէրի իրանները ստացել են բոլորովին այլ կառուցվածք: Ուսերի համեմատ ավելի փոքր տրամաչափի հիմնամասը հայտարկվող շէի իրանին կոնի ձև է հաղորդում, մինչդեռ հակադրված շէն ունի ավելի երկար և համարյա ուղիղ իրան: Դրանից էլ բխում է շէրի արտաքին տեսքի բավականաչափ տարբերությունը, և մասնագետ սպառողը (դատարկ շէրի գնորդը, գինեգործը) ոչ մի պարագայում չի շփոթի դրանք: Այստեղ հարկ է նկատել, որ հակադրված արդյունաբերական նմուշի սեփականատեր «Արմենիա Վայն գործարան» ՍՊԸ-ն հայտնի է սպառողին հիմնականում որպես խմիչքներ, մասնավորապես գինիներ արտադրող ընկերություն, մինչդեռ բողոքարկող «Սեյվրգլասս» ընկերությունը մասնագիտացված է միայն շէրի արտադրության մեջ, որոնք դառնում են ոչ թե հասարակ սպառողի, այլ հիմնականում խմիչքների արտադրության մեջ մասնագիտացված ընկերությունների ուշադրության և սպառման առարկան, որոնց համար շէի դիզայնի յուրաքանչյուր տարր իր ուրույն նշանակությունն ու տարբերակիչ հատկությունն ունի: Դիտարկվող շէրն էլ իրականացված են դրանց յուրահատուկ տարբերակիչ տարրերով, որոնք աննկատ չեն կարող մնալ համապատասխան սպառողի համար: «Սեյվրգլասս» ընկերությունն այն ընկերություններից է, որի յուրօրինակ և բարձրորակ արտադրանքը հայտնի է ամբողջ աշխարհում թե՛ հայ և թե օտարերկրյա արտադրողներին: Այս ընկերության շէրի ստեղծագործական և տարբերակիչ տարրերը դրանց առանձնացնում են նմանատիպ շէրի շարքից:

Բողոքարկողը պնդում է, որ մերժված և հակադրված նշանների համագոյատևումը շփոթության վտանգ չի կարող առաջացնել, քանի որ դրանք ունեն տարբեր ոճային իրականացում և խնդրում է հաշվի առնելով վերոհիշյալ փաստարկները վերանայել 20111618 հայտով կայացրած կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել ծավալային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված դասերի բոլոր ապրանքների նկատմամբ:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հոկտեմբերի 3-ին «Սեյվրգլասս» ընկերության կողմից ներկայացվել է (հայտի համարը N 20111618) ծավալային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքերը և բողոքի բովանդակությունը:

Կոլեգիան առաջարկեց բողոքը մերժել, քանի որ գտնում է, որ իսկապես նշանները նման են և կարող են սպառողին շփոթության մեջ գցել, նշվեց նաև, որ մի գուցե կան տարբերություններ, բայց դրանք այնքան աննշան են, որ տվյալ դեպքում դեր չի խաղում նշանների նմանության հարցում:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետը բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Սեյվերգլասս» ընկերության բողոքը և ծավալային (հայտի համարը 20111618) ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան